ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԿԱՊԻՏԱԼ ԴՐԱՄԱՇՆՈՐՀԻ ՁԵՎՈՎ ՏՐԱՄԱԴՐՎՈՂ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԳՈՒՄԱՐՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՄԱՍԻՆ N 2043-Ֆ/14

ք. Երևան «23» դեկտեմբերի 2022 թ.

Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունը, ի դեմս նախարարության գլխավոր քարտուղար Գ. Սաֆարյանի (այսուհետ պետական մարմին), որը գործում է նախարարության կանոնադրության հիման վրա, մի կողմից, և «Հանրապետական մանկավարժահոգեբանական կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությունը (այսուհետ կազմակերպություն), ի դեմս տնօրեն Ա. Սվաջյանի, որը գործում է կազմակերպության կանոնադրության հիման վրա, մյուս կողմից (այսուհետ՝ միասին կողմեր), հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2022 թվականի դեկտեմբերի 22-ի N 2043 -Ն որոշումը (այսուհետ որոշում), կնքեցին սույն պայմանագիրը (այսուհետ պայմանագիր) հետևյալի մասին.

1. Պայմանագրի առարկան

1.1. Սույն պայմանագրով պետական մարմինը պարտավորվում է «Հանրապետական մանկավարժահոգեբանական կենտրոն» ՊՈԱԿ-ի անհրաժեշտ գրասենյակային գույքի և տեխնիկայի ձեռքբերման համար «Հանրապետական մանկավարժահոգեբանական կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությանը տրամադրել՝ **15 179 000** (տասնհինգ միլիոն մեկ հարյուր յոթանասունինը հազար) ՀՀ դրամ գումար, իսկ կազմակերպությունը պարտավորվում է միջոցառումն իրականացնել որոշմամբ և սույն պայմանագրով սահմանված կարգով:

1.2. Ծրագրով նախատեսված՝ կազմակերպության կողմից իրականացվելիք միջոցառումները (այսուհետ՝ միջոցառումներ) ներկայացված են սույն պայմանագրի անբաժանելի մասը կազմող հավելված 1-ում, իսկ ձեռքբերվող գույքի նախահաշիվը՝ հավելված 2-ում:

2. Կողմերի իրավունքները և պարտավորությունները

2.1. Պետական մարմինն իրավունք ունի՝

2.1.1. ցանկացած ժամանակ (պարբերաբար), առանց որևէ սահմանափակումների, ստուգել կազմակերպության կողմից իրականացվող միջոցառումների ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը.

2.1.2. որոշմամբ սահմանված պահանջներին չհամապատասխանելու դեպքում չընդունելու իրականացված միջոցառումները՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ, և կազմակերպությունից պահանջելու վճարել սույն պայմանագրի 5.1-ին կետով նախատեսված տուգանքը.

2.1.3. առանց իրականացված միջոցառումների արդյունքների դիմաց գումար տրամադրելու՝ միակողմանի լուծելու սույն պայմանագիրը և պահանջելու հատուցել պատճառված վնասները, եթե՝

ա. կազմակերպությունը ժամանակին չի սկսում ծրագրի իրականացումը, կամ ծրագրի իրականացման ժամանակ ակնհայտ է դառնում, որ այն պատշաճ չի իրականացվելու,

բ. կազմակերպությունը երկու և ավելի անգամ խախտել է ծրագրով նախատեսված առանձին միջոցառումների իրականացման ժամկետները (միջոցառումների իրականացման ժամկետներ նախատեսված լինելու դեպքում),

գ. իրականացված միջոցառումները չեն համապատասխանում ծրագրով սահմանված պահանջներին.

2.1.4. սույն պայմանագիրն օրենքով կամ սույն պայմանագրով նախատեսված հիմքերով լուծելու դեպքում պահանջելու իրեն հանձնել անավարտ միջոցառումների արդյունքները:

2.1.5. Պայմանագրի 2.4.4-րդ ենթակետով սահմանված ժամկետում կազմակերպությունից պահանջել ներկայացնել նույն ենթակետով նախատեսված հաշվետվությունը,

2.2. Կազմակերպությունն իրավունք ունի՝

2.2.1. իրականացված միջոցառման արդյունքը պետական մարմնի կողմից ընդունվելու դեպքում պահանջելու վճարել իրեն հասանելիք գումարը.

2.2.2. պետական մարմնի կողմից գումարները չվճարվելու դեպքում միակողմանի լուծելու սույն պայմանագիրը և պահանջելու հատուցել իրեն պատճառված վնասները:

2.3. Պետական մարմինը պարտավոր է՝

2.3.1. ծրագրով նախատեսված դեպքերում աջակցել կազմակերպությանը.

2.3.2. կատարել ծրագրի (առանձին միջոցառումների) իրականացման մոնիթորինգ՝ անհրաժեշտության դեպքում համագործակցելով այլ պետական կառավարման մարմինների հետ.

2.3.3. իրականացնել ծրագրով նախատեսված այլ աշխատանքներ.

2.3.4. իրականացված միջոցառման մասին ներկայացված կատարողական հաշվետվությունների վերաբերյալ համապատասխան որոշում ընդունել դրանք ստանալու օրվանից մինչև 20 աշխատանքային օրվա ընթացքում: Եթե ներկայացված հաշվետվությունների համաձայն իրականացված միջոցառումը համապատասխանում է ծրագրի և սույն պայմանագրի պահանջներին, ապա դրանք ընդունվում են:

2.4. Կազմակերպությունը պարտավոր է՝

2.4.1. իրականացնել ծրագրի շրջանակներում նախարարության կողմից տրամադրված գումարների՝ Հայաստանի Հանրապետության գործող օրենսդրության դրույթներին համապատասխան հաշվառում.

2.4.2. պայմանագրով նախատեսված ֆինանսական միջոցներն օգտագործել ծրագրով և սույն պայմանագրով սահմանված նպատակներով ու չափաքանակներով.

2.4.3. կատարել նախարարության կողմից բացահայտված թերությունների վերացման նպատակով տրված ցուցումները.

2.4.4. գնման պայմանագիրը կնքելուց հետո 10-օրյա ժամկետում Պետական մարմին ներկայացնել գնման պայմանագրի պատճենը, իսկ միջոցառումների ավարտից հետո սույն

Պայմանագրի 6.1. կետով սահմանված ժամկետում Պետական մարմին ներկայացնել ֆինանսական և բովանդակային հաշվետվություն՝ իր կողմից իրականացված ծախսերի և կատարված միջոցառման մասին (նախահաշվի ծախսերը հիմնավորող հաշվապահական և այլ փաստաթղթերը գտնվում են Կազմակերպության մոտ, վերջինս պատասխանատվություն է կրում հաշվետվությամբ ներկայացված տվյալների հավաստիության համար):

2.4.5. սույն պայմանագրի գործողության ընթացքում ապահովել ծրագրի իրականացմանը վերաբերող փաստաթղթերին ծանոթանալու նախարարության հնարավորությունը՝ վերջինիս կողմից գրավոր պահանջ ստանալու օրվանից 5 աշխատանքային օրվա ընթացքում.

2.4.6. ծրագրի իրականացման համար անհրաժեշտ ապրանքները, աշխատանքները և ծառայությունները ձեռք բերել «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով՝ պետության կարիքների համար կատարվող գնումների կանոններին համապատասխան

2.4.7. չծախսված գումարի վերջնական, տարեվերջյան մնացորդը (տնտեսումները, խնայողությունները) վերադարձնել Հայաստանի Հանրապետության պետական բյուջե ոչ ուշ, քան մինչև սույն Պայմանագրով նախատեսված հաշվետվությունների (ֆինանսական և բովանդակային) ընդունմանը հաջորդող 15-րդ աշխատանքային օրը:

3. Մոնիթորինգը

3.1. Պետական մարմինը ծրագրի իրականացման նախնական, ընթացիկ և վերջնական արդյունքների համապատասխանության գնահատման նպատակով իրականացնում է մոնիթորինգ:

3.2. Մոնիթորինգն իրականացվում է Պետական մարմնի և (կամ) նրա կողմից լիազորված անձի կողմից:

3.3. Մոնիթորինգի իրականացման ընթացքում բացահայտված թերացումների ու բացթողումների շտկման նպատակով կազմակերպությանը տրվում են ցուցումներ, և կատարվում են առաջարկություններ:

3.4. Պետական մարմինը ցանկացած ժամանակ կարող է ծրագրի շրջանակներում իրականացնել մոնիթորինգ՝ ուսումնասիրելով ծրագրին առնչվող ցանկացած փաստաթղթեր և նյութեր:

3.5. Մոնիթորինգի իրականացման ընթացքում կազմակերպությունից կարող են պահանջվել գրավոր ու բանավոր պարզաբանումներ և բացատրություններ:

4. Վճարման կարգը և ժամկետները

4.1. Նախարարությունը՝ սույն պայմանագրի 1.1 կետում նշված գումարը կազմակերպությանը տրամադրում է համաձայն ՀՀ կառավարության 2022 թվականի դեկտեմբերի 22-ի N 2043 -Ն որոշմամբ նախատեսված եռամսյակային համամասնություններին համապատասխան:

5. Կողմերի պատասխանատվությունը

5.1. Սույն պայմանագրով և ծրագրով նախատեսված պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման դեպքում կազմակերպությունը պարտավորվում է Պետական մարմնին փոխհատուցել չիրականացված միջոցառման չափով և վճարել տուգանք՝ չիրականացված միջոցառման համար նախատեսված գումարի 0.5 տոկոսի չափով: Տուգանքը հաշվարկվում է նաև Պայմանագիրը դրանով սահմանված ժամկետներում կատարելու, սակայն Պետական մարմնի կողմից չընդունվելու դեպքում: Ընդ որում, տուգանքի վճարումը կազմակերպությանը չի ազատում իր պարտավորությունները կատարելու և խախտումները վերացնելու պարտականությունից:

5.2. Պայմանագրի 1.1-ին կետով նախատեսված միջոցառումների համար պայմանագրով սահմանված ժամկետները Կազմակերպության կողմից չպահպանելու դեպքում վերջինս Պետական մարմնին վճարում է տույժ՝ հանձնման ենթակա, սակայն չհանձնված աշխատանքների արժեքի 0.05 (հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով՝ ուշացված յուրաքանչյուր աշխատանքային օրվա համար:

5.3. Պայմանագրով նախատեսված հաշվետվությունների ներկայացման համար սահմանված ժամկետները չպահպանելու դեպքում Կազմակերպությունը Պետական մարմնին վճարում է տույժ՝ պայմանագրի գնի 0.15 (տասնհինգ հարյուրերորդական) տոկոսի չափով՝ ուշացված յուրաքանչյուր աշխատանքային օրվա համար:

5.4. Պետական մարմինը 5.1., 5.2. և 5.3. կետերով նախատեսված գումարները հաշվարկում և հաշվանցում է կազմակերպությանը վճարվելիք գումարներից:

6. Պայմանագրի գործողության ժամկետը

6.1. Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի ստանձնած պարտավորությունների ամբողջ ծավալով կատարումը: Պայմանագրով նախատեսված միջոցառումների կատարման ժամկետը մինչև 2023թ. սեպտեմբերի 1-ն է, իսկ հաշվետվությունների ներկայացման ժամկետը՝ մինչև Պայմանագրով նախատեսված միջոցառումների կատարման ավարտին հաջորդող 30-րդ օրացուցային օրը, սակայն ոչ ուշ, քան 2023 թվականի դեկտեմբերի 7-ը:

7. Անհաղթահարելի ուժի ազդեցությունը (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

7.1. Պայմանագրով նախատեսված պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներն են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրության հայտարարումը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, նախարարությունների ակտերը և այլն, որոնք անհնարին են

դարձնում պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարումը: Եթե անհաղթահարելի ուժի ազդեցությունը շարունակվում է 3 ամսվանից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծելու պայմանագիրը՝ դրա մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. Եզրափակիչ դրույթներ

8.1. Պայմանագրում կատարվող փոփոխությունները կամ լրացումներն իրավաբանական ուժ ունեն, եթե կազմված են գրավոր և ստորագրված են կողմերի կողմից:

8.2. Պայմանագիրը կնքվում է պայմանագրի կողմերի թվին համապատասխան թվով օրինակով, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

8.3. Պայմանագրով նախատեսված պարտավորությունների չկատարման հետ կապված, ինչպես նաև սույն պայմանագրով չնախատեսված հարաբերությունները կարգավորվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ:

9. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

Պետական մարմին	Կազմակերպություն
ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն	«Հանրապետական մանկավարժահոգեբանական կենտրոն» ՊՈԱԿ
ք. Երևան, Վազգեն Սարգսյան 3, Կառավարական տուն N 2	ք. Երևան, Հ.Քաջազնունի 12
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն	ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Հ/Հ 900011038289	Հ/Հ 900018001801
ՀՎՀՀ 02698732	ՀՎՀՀ 02661245
Գլխավոր քարտուղար՝	Տնօրեն
Գ.Սաֆարյան	Ա. Սվաջյան
(ստորագրություն)	(ստորագրություն)
Կ.Տ	Կ.Տ

2022 թ. դեկտեմբերի
կնքված N2043-Ն/14 պայմանագրի

ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ

NN ը/կ	Իրականացվելիք միջոցառումներ					
	անվանումը	**համառոտ բովանդակությունը**	**կատարման ենթակա գործառույթների նկարագիրը**	**ակնկալվող արդյունքները և դրանց գնահատման չափանիշները**	**վերջնա-ժամկետը**	**պահանջվող գումարը (դրամ)**
1	ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի բնագավառում օժանդակ ծրագրեր իրականացնող կազմակերպություններ ի շենքային պայմանների և գույքային հագեցվածության բարելավում	«Հանրապետական մանկավարժահոգեբանական կենտրոն» ՊՈԱԿ-ի անհրաժեշտ գրասենյակային գույքի և տեխնիկայի ձեռքբերում՝ համաձայն հավելված 2-ով հաստատված նախահաշվի	Գույքի ձեռքբերումը կազմակերպվում է «Գնումների մասին» օրենքով սահմանված կարգով	Նոր գույքով և տեխնիկայով ապահովված կենտրոն	01.09.2023թ.	15 179 000
		Ընդամենը՝				**15 179 000**

Պետական մարմին
ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն
ք. Երևան, Վազգեն Սարգսյան 3,
Կառավարական տուն N 2
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Հ/Հ 900011038289
ՀՎՀՀ 02698732
Գլխավոր քարտուղար՝
Գ. Սաֆարյան
(ստորագրություն)
Կ.Տ

Կազմակերպություն
«Հանրապետական մանկավարժահոգեբանական կենտրոն» ՊՈԱԿ
ք. Երևան, Հ.Քաջազնունի 12
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Հ/Հ 900018001801
ՀՎՀՀ 02661245
Տնօրեն
Ա. Սվաջյան
(ստորագրություն)
Կ.Տ

Հավելված
2022 թ. դեկտեմբերի 23 -ին
կնքված N2043 -Ն/14 պայմանագրի

«Հանրապետական մանկավարժահոգեբանական կենտրոն» ՊՈԱԿ-ի համար անհրաժեշտ ձեռքբերվող գույքի և տեխիկայի նախահաշիվ

N/N	Անվանում	Տեխնիկական բնութագիր	Չափման միավոր	Քանակ	Միավորի արժեք /ՀՀ դրամ/	Ընդամենը /ՀՀ դրամ/
1	Պահարան	Պահարան լամինատե 80սմ x 180սմ , խորությունը 30-35սմ ,ներքևի մասը երկփեղկանի դռներով 80 սմ բարձրությամբ, վերևը՝ բաց դարակաշարեր, գույնը ըստ պահանջի, բարձր որակ /մեկ տարվա երաշխիքով/:	հատ	19	90 000	1 710 000
2	Գրասեղան	Սեղան գրասենյակային, դիմացը փակ, 1 դարակաշար առջևից և 3 դարակաշարեր մի կողմից, չափսերը 130սմ X60 սմ X 75սմ, պատրաստված 18մմ հաստությամբ լամինացված ԴՍՊ-ից և պրոֆիլապատված: Գույնը ըստ պահանջի, բարձր որակ /մեկ տարվա երաշխիքով/:	հատ	44	32 000	1 408 000
3	Գրասենյակային աթոռ	Աթոռ մետաղական հիմնակմախքով,թևերով,անշարժ, նստատեղը և հենակը փափուկ, պաստառապատված կտորից	հատ	44	29 000	1 276 000

		կամ ցանցապատ կտորից , գույնը ըստ պահանջի, նստատեղի՝լայնքը 45-47 սմ, խորությունը՝ 43-45սմ , բարձրությունը՝ 40-43սմ (հատակից մինչև նստատեղ), թիկնակի բարձրությունը ՝ 50սմ, բարձր որակի (մեկ տարվա երաշխիքով):				
4	Համակարգիչ դյուրակիր	Էկրանի չափը – 15.6″ Էկրանի կետայնություն – 1920×1200 FHD Touch Էկրանի տեխնոլոգիա – LED Պրոցեսորի տեսակը – i3-1115G4 (2 core , 4.20 GHz 8MB Cache) Օպերատիվ հիշողություն – 8GB DDR4 2666MHz Հիշողության սարք – SSD 256GB M.2 NVMe PCIe Գրաֆիկական քարտի մոդել – Intel UHD Graphics Դիմային տեսախցիկ – HD Webcam Օպերացիոն համակարգ – Windows 11 Home Wi Fi-ի հնարավորություն – 802.11 ac Bluetooth-ի հնարավորություն – 4.1 Մուտք/ Ելք – HDMI , USB 3.2 Gen 1 Type-A , USB 3.2 Gen 1 Type-C , USB 2.0 , Audio Երաշխիք-12 ամիս /նվազագույն/	հատ	9	340 000	3 060 000
5	Համակարգիչ	Պրոցեսորի տեսակը – i3-10105 (4 core 6MB Cache Չիփսեթ – Intel B460	հատ	9	375 000	3 375 000

		Օպերատիվ հիշողություն – 4GB DDR4 2666MHz SO-DIMM Հիշողության սարք – SSD 120GB Գրաֆիկական քարտի մոդել – Intel UHD Graphics 630 Օպերացիոն համակարգ – DOS Մուտք/ Ելք – RJ-45 , USB 2.0 , USB 3.2 , Display Port , VGA , HDMI Մոնիտոր Էկրանի կետայնություն – 1920*1080 Էկրանի ֆորմատ – 16:9 Անկյունագիծ – 21.5″ Հետին լուսավորություն – W-LED Մատրիցայի տեսակ – LCD Պայծառություն – 250 կդ/մ² Էկրանի ծածկույթ – Anti-Glare Ինտերֆեյս – VGA , HDMI Հաճախականություն – 75Hz Երաշխիք-12 ամիս /նվազագույն/				
6	Օդորակիչ	Ինվերտորային շարժիչ-Էկրան-Այո,Մակերես/մ²/- 65-80 մ² Էներգիայի սպառում /սառեցման/-2800Վտ Էներգիայի սպառում/տաքացման/-2100Վտ Հզորություն /սառեցման/ - 6740 ՎՏ Հզորություն /տաքացման/-7040ՎՏ Երաշխիք-12 ամիս /նվազագույն/	հատ	10	300 000	3 000 000
7	Տպիչ	Տպիչ Canon i-Sensys LBP6030B Տպիչի տեսակ – Սպիտակ – սև լազերային տպիչ Ֆունկցիոնալություն – Տպիչ	հատ	6	125 000	750 000

		Թղթի առավելագույն չափ –A4 Ինտերֆեյս – USB 2.0 Hi Speed Տպելու թույլտվություն (dpi) – 2400*600 Պատճենման/Տպման արագություն – up to 18 ppm Հիշողություն – 32 MB Տպիչի ծատնաբեռնվածություն – 5 000 էջ Քարթրիջ – 725 (1600 էջ) Չափեր – 364 x 249 x 199 մմ Քաշ – 5 կգ Երաշխիք-12 ամիս /նվազագույն/				
8	Քննարկումների սեղան իր 6 աթոռով	Սեղան օվալաձև , պատրաստված 18մմ հաստությամբ լամինացված ԴՍՊ-ից, եզրերը շրջապատված պրոֆիլով : Սեղանի ընդհանուր չափերը՝ երկ. 1,80 մ , լայն. 1.0 մ, բարձր.76 սմ: Աթոռները մետաղական հիմնակմախքով,անշարժ, նստատեղը և հենակը փափուկ,պաստառապատված կտորով:Գույնը ըստ պահանջի, բարձր որակ /մեկ տարվա երաշխիքով/:	հատ	1	160 000	160 000
9	Շերտավարագույր	Ներքին 22 հատ պատուհանների ստվերման շերտավարագույր Մետաղական, լայնքը՝ 25 մմ, հաստությունը՝ 1մմ, հրակայուն, ջրակայուն, ջերմակայուն, երկաթե ամրակներով, գերմանական արտադրության կամ համարժեքը, գույնը՝ ցանկացած ըստ պահանջի	Քառ. մետր	88	5 000	440 000

ԸՆԴԱՄԵՆԸ						15 179 000

Պետական մարմին
ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն
ք. Երևան, Վազգեն Սարգսյան 3,
Կառավարական տուն N 2
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Հ/Հ 900011038289
ՀՎՀՀ 02698732

Գլխավոր քարտուղար՝

Գ. Սաֆարյան
(ստորագրություն)

Կ.Տ

Կազմակերպություն
«Հանրապետական մանկավարժահոգեբանական կենտրոն» ՊՈԱԿ
ք. Երևան, Հ.Քաջազնունի 12
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Հ/Հ 900018001801
ՀՎՀՀ 02661245

Տնօրեն՝

Ա. Սվաջյան
(ստորագրություն)

Կ.Տ